ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-21/24 էլեկտրոնային աճուրդով համակարգչային տեխնիկայի գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 19.07.2021թ. ժամը 10:00-ին Էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

ք. Երևան

19.07.2021թ.
ժ.10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արա Խաչատրյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Մարտիրոսյան /գնահատող/

Հարություն Մուշեղյան /գնահատող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Անի Թաշչյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	Նորմա-պլյուս ՍՊԸ	-
2	ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ	-

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

3.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները			
		Նորմա-պլյուս ՍՊԸ		ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ	
		Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ			
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն
1	**200000**	170000	204000*	192500	231000*
2	**990000**	585000	702000	701100	841320

**Գնային առաջարը գերազանցում է նախահաշվային գինը*

4. Հակադարձ աճուրդի արդյունքում 2-րդ չափաբաժնի մասով համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության, հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

4.1 Նորմա-պլյուս ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:
4.2 Նորմա-պլյուս ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:
4.3 Նորմա-պլյուս ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ դիմում-հայտարարությունը հաստատված չէ տնօրենի կամ վերջինիս կողմից լիազորված անձի կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5. Գնահատման գործընթացի կասեցման մասին

5.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել Նորմա-պլյուս ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 4.3 կետում արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2021թ հուլիսի 21-ին, ժամը 10:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 21.07.2021թ. ժամը 10:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արա Խաչատրյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Մարտիրոսյան /գնահատող/

Հարություն Մուշեղյան /գնահատող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Անի Թաշչյան

6. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

6. Նորմա-պլյուս ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ.

7.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտ ներկայացրած Նորմա-պլյուս ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7.2 Նորմա-պլյուս ՍՊԸ-ի և ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ի հայտերը 1-ին չափաբաժնի մասով համակարգի կողմից մերժվել են նախահաշվային գները գերազանցելու հիմքով:
7.3 ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ի հայտը 2-րդ չափաբաժնի մասով համակագի կողմից մերժվել է համաձայն 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետի:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8. Գնահատման արդյունքների մասին

8.1 Հրապարակել 2-րդ չափաբաժնի համար պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետը՝ գնման գործընթացը 1-ին չափաբաժնի մասով հայտարարել չկայացած, հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Արա Խաչատրյան /նախագահ/

_____ Հարություն Մարտիրոսյան

_____ Հարություն Մուշեղյան

_____ Անի Թաշչյան /քարտուղար/